



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

13.06.2022թ.

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Այսօրվանից մեկնարկում է 2022 թվականի ամառային գորակոչը:

Միրելի նորակոչիկներ,

արդեն ձեր հերթն է մեկնելու Հայոց բանակ, փոխարինելու ավագ ընկերներին և պատվով կատարելու հայրենիքի հանդեպ ձեր սուրբ պարտքը:

Հայրենիքը սկսվում է նաև պետական սահմանից, որի պաշտպանության ու ամրության երաշխավորն այսօրվանից նաև դուք եք:

Վստահ եմ, որ խորը գիտակցումով եք մեկնում հայոց բանակ և այդ ճանապարհին խորհուրդս է՝ լինել զգոն, հայրենասեր, միասնական, ընկերասեր, թև ու թիկունք դառնալ միմյանց:

Լսեք ու հարգեք ձեր հրամանատարներին, նրանց փոխանցած փորձն ու հմտությունները ձեզ առաջնորդելու են առաջիկա երկու տարիներին ու ամենապիտանին են դառնալու ձեր հետագա կյանքում:

Միրե՛ք հայրենիքը և հավատացած եղեք, որ պետությունն ամուր կանգնած է ձեր թիկունքին:

Անձնվիրաբար և իսկական հայ տղամարդուն վայել արժանապատվությամբ, արիությամբ ու քաջությամբ ծառայեք հայրենիքին և վերադարձեք ձեր օջախներ:

Իսկ մեր տղաների ծնողներին, հարազատներին մաղթում եմ հպարտության զգացումին միախառնված համբերություն:

Թող մեր տղաները բացառապես խաղաղ պայմաններում ծառայեն և ողջ ու առողջ վերադառնան:

Բարի ծառայություն ձեզ, խաղաղություն մեր երկրին և փառք հայրենիքի համար իրենց կյանքը գոհաբերած տղաներին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ

ԱՀԱՐՈՆ ՍԱՀԱԿՅԱՆ